

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՔ  
Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամավերջի Հանդեսը տեղի ունեցավ Կիրակի 3 Յունիս, երեկոյեան ժամը 7ին ժառանգաւորաց Մեծ Սրահէն ներս նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ս. Թարգմանչաց Սաներուն յայտագիրը կլանուած պահեց դաշիւնին մէջ ներկայ գտնուող ծնողներն ու հիւրերը: Յայտագրին առաջին մասին մէջ տաս շրջանաւարտ սաները ներկայացան Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Երաւերէն եւ Ֆրանսերէն ուղերձներով եւ անհատական կատարմամբ, իսկ երկրորդ բաժինին մէջ իւրայատուկ ձեւով նշուեցաւ Տիկին Արփինէ Նագգաշեանի 50 ամեայ ուսուցչական վաստակի Յորեկեանը: Վկայականներու եւ շրջանաւարտ դասարանի մրցանակներու բաշխումը եղաւ ձեռամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի բաժնի Ամավերջի Հանդեսը տեղի ունեցաւ Շաբաթ, 26 Մայիսին:

Ի պատիւ շրջանաւարտից ՀԵՄ, ՀՕՄ եւ ՀԵԲՄ ակումբներ իւրաքանչիւրն իր հերթին կազմակերպեցին «Պատուանդաններ» Յունիսի 4ին, 6ին եւ 18ին յաջորդաբար, որոնց նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան անդամներու մասնակցութեամբ:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱՌՈՐԱՑ  
ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆԻ

Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջի Հանդեսը տեղի ունեցաւ ըստ պատշանի Երեմիայի 5 Յունիս, երեկոյեան ժամը 7ին, յաջորդելով Ամավերջի Քննութիւններուն: Ժառանգաւորաց վեցամեայ ընթացքը յաջողութեամբ աւարտեցին եօթը շրջանաւարտներ: Վարժարանի Տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան կարդաց տարեկան տեղեկատուութիւնը: Անոր զուգահեռ սաները ներկայացուցին ուղերձներ, դաշնամուրի համարներ, անհատական եւ խմբական երգեր ու արտասանութիւններ:

Վկայականներն ու մրցանակաբաշխութիւնը եղաւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ: Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ ժառանգաւորներուն յիշեցուց որ անոնց աւարտածը միմիայն «շրջան մըն» էր: Երգուեց Ս. Աթոռոյ Օրհներգը եւ հանդեսին յաջորդեց բացօթեայ հիւրասիրութիւնը:

Ի.Մ.